ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ՝ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՋԱՀԱԿԻՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ.

VII դարում Հայաստանը պահպանում էր իր նախարարական պետականությունը և հոգևոր-մշակութային ինքնուրույնությունը: Հայաստանը նաև քրիստոնեական կրոնի բաբախուն կենտրոններից մեկն էր Մերձավոր Արևելքում: Նրա հոգևոր-մշակութային և քաղաքական զորությունը պահպանելու և ընդլայնելու համար անհրաժեշտ էր ժողովրդին զինել նաև տեսականորեն՝ գիտության նվաճումներով: Անշուշտ, ստեղծվել էին որոշակի նախադրյալներ հայ դասական մատենագիրների՝ Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի և ուրիշների ջանքերով: Հայ թարգմանիչների (հատկապես հունաբան դպրոցի) նպատակասլաց ճիգերով հայերենի էին թարգմանվել հնադարի նշանավոր փիլիսոփաների երկերը:

Մշակվել էին ազգային գաղափարաբանություն, համերկրային աշխարհայեցողություն, որոնք ավելի զարգացվեցին Շիրակացու կողմից:

640-ական թվականներից վերացել էր Սասանյան պետությունը: Ասպարեզ ելած Արաբական խալիֆայությունը քաղաքական նոր իրավիճակ ստեղծեց Արևելքում: Բայց շնորհիվ հայ ազնվականության, Հայաստանը բառիս բուն իմաստով մնում էր աննվաճ: Հայաստանին սպառնում էր հավատակից Բյուզանդիան՝ իր քաղաքական ու դավանական ոտնձգություններով: Անտիկ մշակույթի կրող կայսրությունը հայերին սպառնում էր նաև իր մշակույթով, գիտությամբ: Միաժամանակ, քաղկեդոնական եկեղեցին ջանում էր իրեն ենթարկել ամբողջ հոգևոր կյանքը, գիտությունը և մշակույթը: VI դարից Բյուզանդիայում հալածանքներ սկսվեցին աշխարհիկ գիտությունների նկատմամբ:

Բյուզանդիայի և նրա՝ կայսերականացած եկեղեցու դավանաբանական ու քաղաքական խարդավանքների դեմ գործուն պայքար ծավալեցին Հայոց եկեղեցին, նախարարությունները: Անանիա Շիրակացին հայ միտքը զինեց բնագիտական ձեռքբերումներով՝ դառնալով գիտության անխոնջ ջահակիրը Հայաստանում, վայելելով Կամսարական տոհմի լայն աջակցությունը: Գիտնականն իրեն անվանում է «Անանիայ որդի Յովհաննիսի Շիրակայնոյ»[1] (իմա՛ Շիրակունի), ինչը վկայություն է նրա տոհմիկության: Գուցե Անանիան սերում էր Կամսարական տոհմից[2] և, հավանաբար, վայելում նրա հովանավորությունը: Շիրակացու հեղինակած Խնդրագրքում իրա-

---

[1] **Աբրահամյան Ա.,** *Անանիա Շիրակացու մատենագրությունը (այսուհետև՝ Շիրակացու մատենագրությունը), Ե., 1944, էջ 299:*

[2] **Berberian H.** *Autobiographie d'Anania Sirakaci [Revue des Etudes Arméniennes (այսուհետև՝ REA), t. I, Paris, 1964, p. 189].*

դարձությունները մեծ մասամբ շաղկապվում են այդ տոհմի հետ, նրանց տիրույթ Շիրակում: Թերևս Շիրակացին Խնդրագիրքը գրել է Կամսարականների համար[3]:

Անանիա Շիրակացին ջերմ հետևորդ էր հնադարի հույն գիտնականների՝ Արիստոտելի, Պլատոնի, Պորփյուրի, Զենոնի, նաև Ալեքսանդրիայի գիտնական այրերի: Նա պատանի հասակում հետաքրքրքրվում էր համարողական գիտությամբ, որն ընդգրկում էր թվաբանությունը, տիեզերագիտությունը, երկրաչափությունը և տոմարագիտությունը:

Բյուզանդիային դիմակայելու համար անհրաժեշտ էր զինվել նաև բնական գիտություններով: Այդ պայքարում Շիրակացու համար հուսալի հենարան էին Ալեքսանդրյան ուղղության հույն գիտնականները, որոնք ևս հակոտնյա դիրքերում էին Բյուզանդիայի և քաղկեդոնական եկեղեցու նկատմամբ: Ալեքսանդրիայում ծաղկում էին գիտության բոլոր ճյուղերը: Հետևելով հայտնի տիեզերագետ և աշխարհագետ Կլավդիոս Պտղոմեոսին (70-147)՝ Շիրակացին աշխարհը համարում է մի գունդ՝ այն բաժանելով 360 լայնության աստիճանների, կեսը՝ 180 աստիճանը, դիտելով որպես հայտնի և բնակեցված կիսագունդ, որը ձգվում է Իսպանիայի արևմուտքից մինչև Չինաստանի ծայր արևելքը, իսկ մյուս կեսը՝ անծանոթ երկիր[4]: Շիրակացին նշում է նաև, որ ինքն օգտվել է Պտղոմեոսի Աշխարհագրությունից՝ Պապոս Ալեքսանդրացու «Երկրագրություն» երկի միջոցով:

Անանիա Շիրակացին ջանացել է հայ ժողովրդի բոլոր խավերին լուսավորել, հասու դարձնել գիտությանը, որպեսզի հաղթող լինեն հոգևոր և քաղաքական գոյամաքառումներում: Հայաստանում առևտրի, քաղաքների զարգացումն անհրաժեշտ դարձրեց զարկ տալ բնական գիտություններին, ինչը համակողմանի կերպով կատարեց Շիրակացին: Հայաստանը տարանցիկ երկիր էր, ուստի ժամանակի չափուկշիռների, ուղեգնացությունների համար կարևորվում էր նաև երկնային մարմինների ուսումնասիրությունը: Ընդ որում, Արիստոտելի և ուրիշ հույն փիլիսոփաների հետևողությամբ, Շիրակացին կարծում էր, որ երկնային բոլոր մարմինները բաղկացած են չորս տարրերից՝ հողից, օդից, ջրից և կրակից[5]:

Հզոր հարևանների դեմ գոյապայքարում անհրաժեշտ էր տեսականորեն զորացնել Հայոց եկեղեցին: Շիրակացուն չէր կարող չհուզել այն փաստը, որ հայերը չունեին իրենց անշարժ տոմարը այն դեպքում, երբ Բյուզանդիան, նրա

---

[3] **Տեր-Մկրտչեան Գ.,** *Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896, էջ 16:*

[4] *Անանիա Շիրակացին իր ինքնակենսագրության մեջ նշում է, որ պատանի հասակում սովորել է «համարողական արվեստը» Տրապիզոնում, Տյուքիկոս գիտնականի դպրոցում: Վերջինս երեք տարի ուսանել էր Ալեքսանդրիայում, ապա մերժելով Բյուզանդիայի կայսեր հրամանը՝ մնալու և դասավանդելու Կ. Պոլսում, հաստատվել է հայրենի Տրապիզոն քաղաքում, հավանաբար, մոտավորապես 615 թ. (***Lemerle P.*** Note sur les donnes historiques de L' Autobiographie d' Anania de Shirak (REA, t. I, p. 201). Հետևաբար, Անանիա Շիրակացին նրա դպրոցում ուսանել է այդ թվականից հետո:*

[5] *Շիրակացու մատենագրությունը, էջ 295:*

եկեղեցին ունեին: Հայոց եկեղեցու դավանական կողմնորոշման, նրա ինքնուրույնության պահպանման համար անհրաժեշտ էր ստեղծել անշարժ տոմար, որպեսզի եկեղեցական տոները կատարվեին տարվա նույն օրերին: Դեռևս 353 թվականից մեր եկեղեցին Հայոց շարժական տոմարը զուգադրեց Հուլյան անշարժ տոմարի ամիսների ու օրերի հետ, որի շնորհիվ եկեղեցական շատ տոներ, սրբերի հիշատակի օրերը անշարժ էին և տոնվում էին տարվա որոշակի օրերին:

325 թ. Նիկիայի առաջին տիեզերաժողովի որոշմամբ՝ Անդրեաս Բյուզանդացու կազմած երկհարյուրամյա զատկացուցակը (353- 552 թթ.)[6] հայերը հարմարեցրին իրենց շարժական տոմարին: Բայց դա ևս չփրկեց դրությունը, քանի որ 552 թ. ավարտվեց Անդրեասի կազմած պարբերաշրջանը, որի հետևանքով վերստին խառնաշփոթություն ստեղծվեց եկեղեցական տոների օրերը նշելիս: Այն վերջ գտավ 561 թ., երբ Էաս Ալեքսանդրացին ստեղծեց իր Զատկացույցը, որով կարելի էր որոշել ոչ միայն Զատկի, այլև եկեղեցական մյուս տոների ժամանակը: Հայերն այն ընդունեցին 584 թ.:

Էասյան տոնացույցի ամսաթվերը տրված էին եբրայական տոմարով, ուստի Անանիա Շիրակացին դրանք փոխեց հայկականի՝ «ՇԼԲ բոլորակ Անանիայի Շիրակայնւոյ» անունով: Դա 19-ամյա աղյուսակ էր՝ նախատեսված լուսնի ծնունդների ու լրումների համար: Իր «Զատկի ճառում» Շիրակացին գրում է, որ հայերս «առաւել ճշմարտապէս» ենք անվանել «Զատիկ Տեառն, այսինքն՝ զատուցեալ յամենայն հեթանոսականաց և հրեականաց տաւնից»[7]: Նկատենք, որ նույն ժամանակ Կ. Պոլսի կայսեր հրահանգով, ի հակակշիռ Էասյան Տոնացույցի, տոմարագետ Իրիոնը հորինում է նորաձև ժամանակագրություն և, դնելով գործածության մեջ, կազմում է բյուզանդացիների Տոնացույցը: Բայց, գրում է Շիրակացին, Իրիոնը «ոչ ճշմարտութեամբ խաւսեցաւ. Եւ բանք նորա ոչ են հաւատարիմք»[8]: Շիրակացին շեշտում է, որ հայերը հավատարիմ են մնալու Ալեքսանդրյան ուղղության որդեգրած Տոնացույցին և մերժելու են բյուզանդականը[9]: Անշուշտ, ի հակակշիռ Իրիոնի կազմած Ժամանակագրության, նա պետք է հեղինակեր նաև իր Ժամանակագրությունը:

Փաստորեն, Անանիա Շիրակացին իր կազմած ՇԼԲ բոլորակով հիմքեր ստեղծեց հայոց քրիստոնեական տոնացույցի գործադրման և հետագա կատարելագործման համար՝ կարգավորելով հայոց տոնական տարին[10]: Իհարկե, ոչ բոլոր քրիստոնեական տոներն էին անշարժ և տրված Հուլյան տոմարով: Շիրակացին ջանացել է ՇԼԲ բոլորակը մատչելի դարձնել նաև հասարակ ժողովրդին, քանզի, գրում է գիտնականը, «չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ շինականք…»[11]: Այդ նպատակադրումով նա յուրաքանչյուր

---

[6] **Անանիա Շիրակացի,** *Տիեզերագիտութիւն և տոմար, Ե., 1940, էջ 3:*

[7] *Շիրակացու մատենագրությունը, էջ 297:*

[8] *Նույն տեղում, էջ 298:*

[9] *Նույն տեղում, էջ 297:*

[10] **Վարդանյան Ռ.,** *Հայոց տոնացույցը, Ե., 1999, էջ 196:*

[11] *Շիրակացու մատենագրությունը, էջ 299:*

տարվա համար սահմանում է առանձին կանոն, 532 տարիների համար և կազմում 532 կանոն[12], սկսելով 552 թ. հուլիսի 11-ից: Հենց այդ օրվանից սկիզբ առավ Հայոց մեծ թվականը[13], ինչն, անշուշտ, համահունչ էր հայերի դավանական ինքնորոշմանը: Սակայն Հայոց մեծ թվականը նույնպես շարժական էր: Թեև Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Հայոց Անաստաս կաթողիկոսը «հոգացեալ վասն Հայկականս տօմարի, զի թերևս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել. զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց», Անանիա Շիրակացուն, «որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ», պատվիրում է կազմել Հայոց անշարժ տոմարի նախագիծ, որպեսզի «մի կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն Հռովմայեցւոց»[14] (իմա՛ բյուզանդացիների): Սակայն անշարժ տոմարն այնպես էլ չի արմատավորվում Հայոց տոնացույցում: Ըստ երևույթին, Դրասխանակերտցին նկատի է ունեցել հայկականի հետ Շիրակացու կողմից նշած Հույյան տոմարի զուգահեռը՝ որպես անշարժ տոմարի նախագիծ[15]: Նկատենք նաև, որ Եղվարդի՝ 660 թ. իր կազմած արձանագրության մեջ Անանիա Շիրակացին օգտագործում է փրկչական թվականը[16], որն, ինչպես հայտնի է, սահմանվել էր 525 թ. Հռոմում: Բայց մեր եկեղեցին մինչև 1084 թ. ղեկավարվում էր Հայոց մեծ թվականով, ինչը թեև անընդմեջ շարունակվող էր, բայց այն, ինչպես նշվեց, շարժական էր: Հետագայում Հովհաննես Իմաստասերը Հայկական տոմարը դարձրեց անշարժ՝ որպես սկիզբ ընդունելով 552 թ. և դրան ավելացնելով նոր ՇԼԲ (532 տարի), նա ստացավ 1084 թվականը, որպես իր ստեղծած անշարժ փոքր տոմարի սկիզբ (այն ավարտվում էր ՇԼԲ տարի հետո՝ 1616 թ., երբ Ազարիա Ջուղայեցին կազմեց նոր «Փոքր տոմար» (այն գործածեցին միայն պարսկահայերը XVII-XVIII դդ.)[17]:

Զարգացնելով անտիկ և հելլենիստական գիտության ու մշակույթի ավանդույթները՝ Շիրակացին սեփական դիտողությունների հիման վրա փորձել է յուրովի բացատրել բնական երևույթները, երկնային մարմինների բնույթն ու շարժումները, երբեմն դրանք լուսաբանել երևակայության ուժով՝ ջանալով հակասության մեջ չմտնել սուրբգրական ավանդույթի հետ: Նա համոզված է, որ Սուրբ գրքի սահմանած սկզբունքները «ոչ ընդդէմ են բնական իմաստութեան», այլ միասնության մեջ են նրա հետ, ուստի «դաստիարակ եղեն

---

[12] *Նույն տեղում:*

[13] **Թումանյան Բ.,** *Հայ աստղագիտության պատմություն, Ե., 1968, էջ 24:*

[14] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92:*

[15] **Վարդանյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 173: Ընդ որում, Շիրակացին այլ առիթով նշում է, որ «կայ անշարժ… ամենայն տօնք և եղանակք ազգաց իւրաքանչիւրոց: Բա՛ց ի Հայոց» և որ «ներհունք արուեստին». սահմանեցին «տումար մերոյ ազգիս անշարժ որպէս այլոց ազգաց»* (**Անանիա Շիրակացի,** *Տիեզերագիտություն և տոմար, էջ 89): Հետևաբար, գիտնականն իրեն չի վերագրում Հայոց անշարժ տոմարի ստեղծումը, այլ՝ ուրիշների, անշուշտ, նկատի ունենալով Հույյան տոմարի զուգահեռը:*

[16] **Մուրադեան Պ.,** *Եղվարդի 660 թուականի արձանագրութիւնը (Կովկասեան մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Ա, Ե., 2008, էջ 380-381):*

[17] **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, Ե-Ժ դդ., հ. Ա, Ե., 1959, սյունակ 273:*

մեզ առաջի իմաստասէրքն»: Իսկ մենք, հավելում է գիտնականը, հավատարիմ մնալով աստվածային հավատին, «միշտ դալարաբերք պըտղաբերք գտցուք ի գիտութեան»[18]: Շիրակացին համոզված է, որ բանականությանն անմատչելի ոչինչ չկա[19]: Ուղենշող այս սկզբունքով առաջնորդվելով՝ նա ձեռնարկեց գրեթե բոլոր երկնային ու երկրային երևույթների հետազոտությունը՝ հայրենի գիտությունն ըստ ժամանակի պահանջների զարգացնելու, այդ ասպարեզում հարևաններից հետ չմնալու կանխահոգությամբ: Նա հավատում էր գիտության մեծ ուժին և գիտնականի վեհ առաքելությանը: Հարկ է նշել, որ այն ժամանակ դեռ գիտական աշխարհին քիչ բան էր հայտնի (օրինակ՝ ձգողականության, վանողականության օրենքները և այլն): Ուստի, Շիրակացին ապավինում է սեփական դիտողականությանը: Այսպես, նա կարծում է, թե իբր երկրագունդը կառուցված է երկնքի մեջտեղում և նրա արագ պտույտի շնորհիվ ցած չի ընկնում, քանի որ իր ծանրության պատճառով ձգվում է դեպի ներքև, իսկ «հողմն իւրով ուժգնութեամբ ջանայ ի վեր բերել զնա»: Եվ այդ կերպ երկրագունդը «զհասարակակշիռ կէտն կալեալ կայ»[20]:

Շիրակացին մեծ նշանակություն է տալիս փորձին ու դիտողականությանը՝ նաև գործնական խնդիրներ լուծելու համար: Նա համոզված է, որ երկնային լուսատուների վրա երևացող նշանները «ի շահ օգտութեան աշխարհի» են: Դրանք զգուշացնում են նավազներին՝ պաշտպանվելու փոթորիկներից, ճանապարհորդներին՝ զգուշանալու վատ եղանակից, իսկ հողի մշակները դրանց շնորհիվ կանխավ իմանում և սկսում են «սերմանել և տնկել ի պատշաճ ժամանակի»[21]: Շիրակացու կարծիքով, լուսնի պարզությունը նշան է պարզ եղանակի, իսկ կարմիր և մութ տեսքը՝ առատ տեղումների, ամպրոպների ու փոթորիկների[22]: Նա արեգակի վրա նշմարվող նախանշաններով բացատրում է տարվա եղանակները, տեղումները, հողմերը, սառնամանիքները, խորշակը[23]: Բայց կարծում է, թե «գնդաձև» արեգակն է «ցուրտ բնութեամբ. զջերմութիւն և զլուսաւորութիւն յարփոյ առեալ հեղու յօդս, որով լուսաւորի և ջեռնու երկիր»[24]: Շիրակացին նաև կարծում է, թե տիեզերքը սահմանափակ է, ժխտում է այն հեթանոս փիլիսոփաների կարծիքը, որոնք գտնում էին, թե կան «երկինս բազումս և աշխարհս անհամարս»[25]: Հայտնի է, որ միայն 1924 թ. գիտությունն ապացուցեց, որ բացի մեր գալակտիկայից, կան նաև բազում այլ գալակտիկաներ՝ ինչպես ընդունված է անվանել՝ «աստղային կայսրություններ»: Եվ անգամ այժմյան գիտության բնագավառում, ինչպես նշում է Վիկտոր Համբարձումյանը, «ամեն մի բնական երևույթ ունի անսահման

---

[18] **Անանիա Շիրակացի,** *Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 30:*
[19] *Նույն տեղում, էջ 2:*
[20] *Նույն տեղում, էջ 10:*
[21] *Նույն տեղում, էջ 42-43:*
[22] *Նույն տեղում, էջ 42:*
[23] *Նույն տեղում, էջ 50-51:*
[24] *Նույն տեղում, էջ 47:*
[25] *Նույն տեղում, էջ 4-5:*

խորություն, և ինչքան էլ մենք ուսումնասիրենք այն, այնուամենայնիվ, դեռ մնում են որոշ բաց խնդիրներ»[26]:

Շիրակացին ճշգրտորեն է լուծում տիեզերաբանական որոշ հարցեր՝ դարձյալ գործնական նկատառումներով: Օրինակ, նա հյուսիսային բևեռամերձ աստղերի մասին գրում է, որ դրանք երևացող նշանացույցեր («նշանակ տեսական») են, քանզի երևում են և ծառայում որպես ուղեցույցեր ծովագնացների համար[27]: Նա ճշգրտորեն է բացատրում նաև արեգակի ու լուսնի խավարումները և այլ երևույթներ: Միաժամանակ, գիտնականը պայքար է տանում սնոտիապաշտության դեմ, գիտականորեն հիմնավորում դրա սխալ և մերժելի բնույթը, ջանում գիտությունը շաղկապել փորձի հետ: Օրինակ, կենդանակերպերի (համաստեղությունների) մասին աշխատության մեջ Շիրակացին նշում է, որ բազմաթիվ փորձերի միջոցով «կարող եմ հասու լինել» այն ամենին, ինչ «բնական բերմամբ հրամայեցաւ լինել»[28]: Նա կոչ է անում չհավատալ Ծիր Կաթինի մասին հորինված զրույցներին, ի մասնավորի Վահագն աստծու կողմից ասուրների աստված Բարշամից հարդ գողանալիս սպիտակ գոտու՝ «հարդագողի ճանապարհի» գոյանալու շուրջ հյուսված առասպելին: Շիրակացին գիտական ճշգրտությամբ բացատրում է, որ Ծիր Կաթինը «խիստ աստեղք են բազումք, նուազք և յոյժ ընդ աղօտ երևմանէն միաւոր լոյսն տեսանի»[29]: Գիտնականը փորձում է բացատրել նաև երկրաշարժերի առաջացման պատճառները, իհարկե, երևակայության ուժով նշելով, որ իբր դրանք հետևանք են գետնի խորքերը թափանցած ուժգին հողմերի՝ դեպի վեր կատարած շարժման, որի պատճառով տեղի է ունենում «յոլով քաղաքաց սպանումն... և աւերումն շինուածոց»:

Անանիա Շիրակացին ջատագով է պետականության և օրենքի գերակայության: Նա, անշուշտ, երազում է վերականգնված տեսնել Հայոց միասնական թագավորությունը, ուստի, իր Աշխարհացույցում ներկայացնում է Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանը: Թագավորները, գրում է նա, մարդատյաց չեն, «այլ յառաջահոգակք, շինիչք և խաղաղասէրք, կարգիչք և յօրինիչք գեղեցկադիր օրինաց»[30]: Շիրակացին գտնում է, որ թագավորներն ու մեծամեծ իշխանները, «որոց Աստուծոյ զաշխարհս է հաւատացեալ», աստվածային կամքով զգաստանում են և պարտավորվում «խնամակալ լինել աշխարհի... վասն բազմությանն ժողովրդեանն»[31]: Նա քննադատում է քաղդեացի այն գիտնականներին, որոնք կարծում էին, թե բարությունը կամ չար լինելն ի ծնե է և «ոչ կամօք մերովք»: Այդ դեպքում «աւելորդ են օրէնք, որ դնեն սահման և պատուիրան զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ոչ: Աւելորդ են դարձեալ և դատաւորք, որ պատուեն զբարեգործն, և

---

[26] **Համբարձումյան Վ.,** *Հակադարձ խնդիրները բնագիտության մեջ, Ե., 1983, էջ 7:*

[27] **Անանիա Շիրակացի,** *Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 38-39:*

[28] *Շիրակացու մատենագրությունը, էջ 324:*

[29] *Նույն տեղում, էջ 321:*

[30] **Անանիա Շիրակացի,** *Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 35:*

[31] *Նույն տեղում, էջ 92:*

առնեն զպատիժս չարագործացն արդար դատաստանօք, քանզի ըստ բախտից ծննդոցն ժպրհութիւն և չարութիւն գողոյն իւրեանց կամացն, և ոչ անօրէնութիւն սպանողին իւրով յօժարութեամբն...»[32]: Այդ դեպքում անօգուտ կլինեին մեծավաստակ արհեստավորների, շինականների աշխատանքները, քանի որ առանց դրանց էլ ինքնաբերաբար կհոսեին կենսամիջոցները: Վաճառականն էլ առանց ճանապարհորդության ժամանակ կրած տառապանքների, ձեռք կբերեր «շահք բազումք մեծութեանց»[33]:

Շիրակացին ջերմեռանդ պաշտպան է Հայոց եկեղեցու և նրա դավանական կողմնորոշման ու վարդապետության, որը նա ջանում է գիտականորեն հիմնավորել[34]: Նա ելնում է այն ծանրակշիռ փաստից, որ միասնական պետականության կորստից հետո հայությանը միավորողի, նրա համերկրային իրավակեցությունն ապահովողի և նախարարներին համախմբողի գաղափարական առաջատար ուժի դերում հանդես էր գալիս եկեղեցին, որը նաև զորեղ հարևանների ամենակուլ ախորժակներին հակակշռող զորավոր գործոն էր: Եկեղեցին հովանավորում էր մտավոր-մշակութային գործընթացները, գիտությունը, որպեսզի հարևանների ուծացնող ազդեցության դեմ մղվող հոգևոր-դավանական գոյապայքարում ժողովուրդը դիմանա, և փրկվի նրա ներկան:

Երկրի ինքնուրույնության ապահովման գործում վճռորոշ էր, անշուշտ, հայ նախարարական համակարգի առկայությունը: Շիրակացին կարևորում է հատկապես Կամսարականների նշանավոր տոհմի խաղացած դերը երկրի պաշտպանության գործում: Իր կազմած Խնդրագրքի հենց սկզբում (առաջին խնդրում) գրում է, որ իր հորից տեղեկացել է, թե «ի ժամանակի պատերազմացն հայոց ընդ պարսս, սաստիկ քաջութիւնք լինէին ի Կամսարականէն Զաւրակայ»: Եվ որ նույն Զորակը մեկ ամսվա ընթացքում երեք անգամ կոտորում է պարսիկ զինվորներին, որոնցից 280 զորականներ «անկանէին փախստեայ ի Նախճաւան»[35], որից հետո չպիտի լիներ ընդհարման վայրը. հավանաբար, այն տեղի էր ունեցել Դվին մայրաքաղաքի մերձակայքում: Գիտնականը նկատի ունի 571-572 թթ. Վարդան Մամիկոնյանի («Կարմիր Վարդանի») գլխավորած ապստամբությունը[36]: Զորակը, հավանաբար, Վարդանի զինակիցներից էր[37]: Թեև Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) գրում է,

---

[32] Նույն տեղում, էջ 28:

[33] Նույն տեղում, էջ 28-29:

[34] Շիրակացու մատենագրությունը, էջ 289-290:

[35] Նույն տեղում, էջ 227:

[36] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 5:

[37] Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հ. II, Ե., 1984, էջ 257, ծան. 30: Հարկ է նշել, որ VII դ. Կամսարականները, բացի Շիրակից և Արշարունի-քից, տիրացել էին նաև Աբեղյանք, Գաբեղյանք, Բասեն, Հավնունիք, Վանանդ և Աշոցք գավառներին, ապա նաև Արագածոտնի մի մասին (Թալինը շրջակայքով) և այլն (նույն տեղում, էջ 321):

թե Վարդան Մամիկոնյանը «սուսերահար առնէր զՍուրէն մարզպան»[38], բայց ավելի հավաստի է ժամանակամերձ Անանիա Շիրակացու վկայությունը, որի համաձայն, Սուրեն մարզպանին սպանել է Զորակ Կամսարականը[39]: Շիրակացին Կամսարականներին հիշատակում է նաև 20 և 21-րդ խնդիրներում: Ընդ որում, վերջինում նշվում է, որ Ներսեհ Կամսարականը (Արշավիր որդին) «ի յաղթել պատերազմաւ Բահղլճացն[40] առնու գերի սաստիկ յոյժ»[41]: Գերիների մի մասին նա ընծայում է սասանյան արքային (Պերոզին): Դա պետք է տեղի ունեցած լինի հայերի 482-484 թթ. ապստամբությունից առաջ՝ 470-ական թվականներին:

Անանիա Շիրակացին իր կազմած Ժամանակագրության մեջ ներկայացնում է համաշխարհային պատմությունը, նշում նաև Հայաստանի անցյալի պատմարժան դրվագները՝ օգտվելով Մովսես Խորենացուց, Անդրեաս Բյուզանդացուց, նաև Սեբեոսից: Անցյալը վեր հանելը ներկան գաղափարապես զորացնելուն էր միտում: Այս Ժամանակագրությունը ոմանք համարել են ուրիշ հեղինակի երկասիրած գործ, բայց, դատելով ըստ ամենայնի, այն կարող էր հեղինակել Շիրակացին, որպես խորահմուտ գիտնական և հայադավան վարդապետության ջերմեռանդ պաշտպան: Ընդ որում, իր՝ Զատկի ճառում նա նշում է, որ հրեից պատմության մասին ինքը խոսել է «ի ժամանակական կանոնի նախապատում հանդիսին մերոյ»[42], անշուշտ, նկատի առնելով Ժամանակագրությունը, որտեղ, իրոք, նա շարադրել է հրեա ժողովրդի պատմությունն ըստ Հին Կտակարանի: Այդ երկում տրված է նաև Պարսկաստանի, Բաբելոնի, Պտղոմեոսյան Եգիպտոսի, Հռոմեական կայսրության, Բյուզանդիայի և այլ երկրների պատմությունը, երբեմն այն հարակցելով Հայոց պատմության հետ: Այսպես, Հռոմի Դիոկղետիանոս կայսեր մասին պատմելիս Շիրակացին նշում է նաև, որ «կենարար վարդապետութիւն Քրիստոսի պատմեցաւ՝ Հայոց ի ձեռն սուրբ Գրիգորի Պարթևի»[43]: Բյուզանդիայի Արկադիոս կայսեր (395-408) մասին հիշելիս նա գրում է, որ «ի սորա աւուրս էր Սուրբ Սահակ՝ Հայոց հայրապետ», որի օրոք «Մեսրովբ երանելի, ի Հացեկաց Տարաւնոյ, յազատ տանէ» հնարում է Հայոց գրերը[44]:

Ժամանակագրության մեջ Շիրակացին նեստորականությունը և քաղկեդոնականությունը համարում է հերետիկոսություն: Խոսելով Հայաստանի 591 թ. բաժանման մասին՝ նա գրում է, որ նույն ժամանակ «երկու կաթողիկոսք նստան ի Հայս, Մովսէս ի Դուին Պարսից կողմանն, ուղիղ հաւատով, եւ Յովհան ի Հոռոմոց կողմանէ Քաղկեդոնի աղանդովն»[45]:

---

[38] **Ստեփանոս Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 84:*

[39] *Շիրակացու մատենագրությունը, էջ 228:*

[40] *Նկատի ունի Բահլ քաղաքի ապստամբ բնակիչներին:*

[41] *Շիրակացու մատենագրությունը, էջ 230:*

[42] *Նույն տեղում, էջ 294:*

[43] *Նույն տեղում, էջ 374:*

[44] *Նույն տեղում, էջ 389:*

[45] *Նույն տեղում, էջ 397:*

Անանիա Շիրակացին ականատես եղավ արաբական արշավանքներին: Նա նշում է Դվինի 640 թ. գրավումը և 35 հազար մարդու գերեվարվելը[46]: Նույնը վկայում է նաև Սեբեոս պատմիչը[47]: Ժամանակագրությունն ավարտվում է 685 թ. դեպի Հայաստան, Վրաստան և Աղվանք խազարների կատարած արշավանքով[48], ինչը վկայում է, որ Անանիա Շիրակացին վախճանված պետք է լինի այդ թվականից հետո, գուցե 690-ական թթ. սկզբներին, երբ Հայոց իշխանն էր Ներսեհ Կամսարականը (689-693), որի օրոք, ինչպես հայտնի է, Հայաստանը դեռ վերջնականապես չէր նվաճվել արաբների կողմից:

Անզուգական, կոթողային աշխատություն է Շիրակացու Աշխարհացույցը:Հայտնի է, որ VI դ. Բյուզանդիայում կազմվել էր կայսրության աշխարհագրական տեսությունը՝ «Ուղեցույց ճանապարհորդին» վերտառությամբ (հեղինակ՝ Հիերոկլես): Այդտեղ նշված են Բյուզանդիայի բոլոր (թվով 64) պրովինցիաները, 912 քաղաքները[49]: Անշուշտ, Շիրակացին, բացի Ստրաբոնի, Պտղոմեոսի երկերից, ուսումնասիրել է նաև այս աշխատությունը՝ դեռ Տրապիզոնում ուսանելիս: Բայց նա Աշխարհացույցում ներկայացնում է այն ժամանակվա հայտնի ամբողջ բնակելի աշխարհը՝ բաժանելով երեք աշխարհամասերի՝ Եվրոպա, Լիբիա (Աֆրիկա) և Ասիա: Նշում է նրանցում եղած երկրները, ժողովուրդները: Լիբիայի մասին խոսելիս որպես նրա երրորդ մաս է հիշատակում Աֆրիկան՝ նկատի առնելով Բյուզանդիայի Մավրիկիոս (Մորիկ) կայսեր (582-602) օրոք եղած վարչական բաժանումը, երբ հիշյալ պրովինցիան բաժանվեց երկու մասի՝ Աֆրիկե և Բիզակենե: Շիրակացին նշում է, որ Աֆրիկեի երեք քաղաքների՝ Տիսոբայի, Իդիսիայի և Պոնտիկեի «իշխանն էր Ներսեհ Կամսարականը՝ Շիրակի ու Արշարունիքի տերը»[50]: Այս Ներսեհը, հավանաբար, VII դ. վերջում է ապրել[51]:

Անանիա Շիրակացին Աշխարհացույցում տվել է ոչ միայն Մեծ Հայքի ֆիզիկական, երկրագիտական, այլև քաղաքական աշխարհագրությունը՝ գիտական բարձր մակարդակով: Գիտագործնական նշանակություն ունի նաև Շիրակացու «Մդոնաչափք» աշխատությունը, որտեղ տրված են Հայաստանով անցնող վեց տարանցիկ ճանապարհները, նրանց վրա եղած խոշոր քաղաքները և վերջիններիս միջև կառուցված հեռավորությունը[52]:

Թեև Շիրակացին օգտվել է Պտղոմեոսից, բայց նա բազմաթիվ նոր տվյալներ է հաղորդում Մեծ Հայքի և հարևան երկրների մասին: Աշխարհացույցի առաջին մասում տրված է Իսպանիայի ծայր արևմուտքից մինչև Չինաստան (Սյունիկիա) ընկած երկրների մասին: Ընդ որում, այստեղ նույնպես նա

---

[46] Նույն տեղում, էջ 398:

[47] Պատմութիւն **Սեբէոսի,** աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 138:

[48] Շիրակացու մատենագրությունը, էջ 399:

[49] История Византии, т. I, М., 1967, с. 57, 383.

[50] Geographie de **Moise de Coréne** d' après Ptolemée. Texte arménien, traduit en francais par le p. Arséne Soukry, Venise, 1881, p. 24.

[51] Նույն տեղում, էջ 24, ծան. 2:

[52] Շիրակացու մատենագրությունը, էջ 355:

ընդունում է երկրի գնդաձևությունը[53], անտեսելով սուրբգրական ավանդույթը, որը երկիրը համարում էր տափակ, քառակուսի գոյացություն: Աշխարհացույցում առավել մանրամասնորեն տրված են Մեծ Հայքի 15 նահանգները՝ իրենց 189 գավառներով, նրանց ազգագրությունը, երկրագրությունը, կենդանական աշխարհը և այլն:

Թեև Անանիա Շիրակացին փիլիսոփայության մասին աշխատություն չի գրել, բայց նրա երկերը համեմված են փիլիսոփայական մտորումներով: Հայտնի է, որ Շիրակացու ապրած դարաշրջանում Բյուզանդիայում արգելված էր արծարծել անտիկ փիլիսոփաների գաղափարները, այն դեպքում, երբ Հայաստանում արդեն թարգմանված էին Արիստոտելի երկերի մեծ մասը, Զենոնի, Հերմեսի և այլոց գործերը: Ավելին, Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը իրենց ժամանակին կատարել էին նրանց երկերի մեկնությունները: Անանիա Շիրակացին իր աշխատություններում սկզբնավորեց բնափիլիսոփայությունը՝ փիլիսոփայության մեջ բնագիտական ուղղությունը: Նրա կարծիքով, բնությունը ևս արարիչ է՝ Աստծու պես, որը ամեն ինչ կամեցել է ստեղծել «բնական բերմամբք»[54], իհարկե, չմոռանալով նաև նշել, որ «ամենայն տարերքս» երկյուղած ծառայում են նրան[55]:

Շիրակացին օժտված էր գիտական մեծ կարողունակությամբ: Հանրագիտակի վսեմ խոյանքով նա ջանում էր հարազատ ժողովրդին հասու դարձնել գիտության բոլոր բնագավառներին: Նա գրել է նաև չափ ու կշիռների, թանկարժեք քարերի, ինչպես և երաժշտության մասին, հորինել «քաղցրալուր շարականներ»[56]: Նրա սիրտը բաբախում էր հարազատ ժողովրդի համար: Շիրակացին Մովսես Խորենացու պես ջանում էր հայ ժողովրդին ներկայացնել որպես բիբլիական ազգ՝ Հայկ նախահորը համարելով «յազգէ Յաբեթի որդւոյ Նոյի»: Նրա կարծիքով, Հայոց թվականի ակզբնավորումն առնչվում է Հայկի, իսկ հայոց ամիսների անունները՝ նրա ուստրերի ու դուստրերի անվանումների հետ[57]: Շիրակացին նշում է հայկական ամսանունները՝ սկսելով Նավասարդից: Նա ներկայացնում է նաև հին հայոց ամսվա օրերի և օրվա ժամերի, ինչպես նաև մյուս ժողովուրդների ամիսների անունները[58]:

Իր թողած անկշռելի գիտական ժառանգությամբ Անանիա Շիրակացին կորով է ներշնչել հայությանը՝ սնելով հույսով ու հավատով: Իր լուսասփյուռ գաղափարներով նա ժողովրդին զինեց նոր աշխար-

---

[53] *Նույն տեղում, էջ 337:*

[54] **Անանիա Շիրակացի,** *Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 11:*

[55] *Նույն տեղում, էջ 35:*

[56] *Նույն տեղում, էջ 76:*

[57] *Նույն տեղում, էջ 76-77:*

[58] **Անանիա Շիրակացի,** *Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Ե., 1979, էջ 253-257:*

հայացքով՝ դառնալով վաղ միջնադարի մեր հոգևոր պատմության պսակը: Իր կյանքը նվիրեց երկնային մարմինների՝ արեգակի, լուսնի, աստղերի ուսումնասիրությանը՝ ինքը դառնալով դարաշրջանի Հայոց երկնակամարի ամենավառ աստղը:

АНАНИЯ ШИРАКАЦИ – СИМВОЛ ДУХОВНОЙ И ПОЛИТИЧЕСКОЙ САМОСТОЯТЕЛЬНОСТИ АРМЯН

ВАРДАНЯН В. М.

Резюме

Широк был круг научных интересов А. Ширакаци. Он занимался исследованиями в области математики, астрологии, метрологии, геометрии, географии и иных наук. Ученый верил в великую движущую силу науки, придавая важное значение опыту и научному созерцанию, в то время как наука основывалась на традициях.

Анания Ширакаци мечтал о восстановлении Армянского царства (1-5 вв.). В его труде “Армянская география” (“Ашхарацуйц”) представлена география и этнография Аршакидской области и провинции Великой Армении, ее флора и фауна. Будучи защитником Армянской апостольской церкви, он заботился об укреплении ее основ, сохранении ее структуры. Ученый работал над созданием армянского неподвижного календаря.

ANANIA SHIRAKATSY, THE ARMENIAN SYMBOL OF SPIRITUAL AND POLITICAL NONCOMMITMENT

V. VARDANYAN

Abstract

The scope of Anania Shirakatsy’s interests was quite wide. He did research into mathematics, astrology, weights and measures, geometry, geography and so on. In his opinion, there was nothing beyond human mind. He believed in great force of science highlighting experience and self-reflection, whereas the science of the time was based on traditions.

Anania Shirakatsy dreamed to see the Armenian kingdom (1st -7th cc) resurrected. His “Armenian geography” (Ashkharatsuyts) features the geography and ethnohraphy, flora and fauna of the provinces in Great Armenia. Being a defender of the Armenian Apostolic church, he took care of strengthening its basis and structure. Shirakatsy also worked on the idea of Armenian fixed calendar.